ներ կը տեսնէ, սակայն նա վճռական կերպով կ'ուզէ այդ ծրագիրը գործադրել, կարեւոր ծախքերն ընելով: Քուէարկութիւնն նպաստաւոր չեղաւ կայսեր գաղափարաց: Սակայն Հոհէնլոհէ իշխանն՝ քուէարկութենէն առաջ ծանուցած էր՝ որ թէպէտ կայսեր այդ ծրագիրն անընդունելի ալ ըլլայ քուէիւք, այս գործօ՝ սրաւան խնդիր պիտի ըլլայ:

Գուլիէլմոս կայսրն և Զարն իրարու հետ պիտի տեսակցին, կ'ըսուի. և այս տեսակցութեան շատ կերպ մեկնութիւններ կու տան գերմանական պաշտօնական լրագիրք: — Դարձեալ զանազան նիստեր եղան վերոյիշեալ ջրանցքին համար:

## ՍՊԱՆԻԱ

Սպանիան կը յուզեն ընկերվարական և հասարակապետական խումբեր, որք իրենց շփոթութեան պատրուակ կ'առնուն կրօնաւորաց արտաքսման խնդիրը: Բաց աստի, ժանտախտին տարածման լուրը մեծապէս կը վնասէ տէրութեան, որ ձեռք առած է ամէն խիստ միջոցներ այս ահաւոր հարուածին դէմ առնելու համար, նոյն իսկ չոգեկառաց ընթացքը արգելլով զանազան տեղեր: — Սուտ լուր մ'եղաւ իբրեւ թէ Տօն Քարլոս Պիրենեանց սահմանագլխին վրայ է:

## ԱՅԼԵՒԱՅԼ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ԻՏԱԼԻՈՅ մէջ շատ տեղեր մեծամեծ պատերազմական փորձեր կատարուեցան, մանաւանդ ի Փիեմոնթ. այս փորձերու միջոց հանդիպեցան մի քանի ձախորդ բաներ, թէպէտ և ծանր հետեւանք չունեցան: — Զինաստանի խնդրոյ մասին դեռ եւս Ռաճճիյէն լուր կը սպասուէր. Իտալիա գիտնալով հանդերձ որ ի Փեքին գործերն շատ դանդաղ կը կատարուին, ղրկեց իւր Liguria զրահաւորը ճենական ջրոց մէջ: — Մարոքքոյի սուլթանին պաշտօնական այցելութեան մը համար գնաց Lombardia նաւն: — ԲՈՀԵՄԻՈՅ մէջ արիւնահեղ կռիւներ կը շարունակուին ընդդէմ Զէքերու. — Կրատիսթի մէջ Գերմանացիք յարձակեցան պաշտօնական տեղեաց վրայ, 4 հոգի մեռան և 14 ալ վիրաւորուեցան: — ԱՄԵՐԻԿՈՅ մէջ Մաք-Քինլէյ թուղթ մը ղրկեց Քուպայի վարչին, որոյ մէջ Քուպացւոց անկախութիւնը կը յայտարարէ. — Նոյնն՝ ճառ մ'ալ խօսեցաւ ըսելով՝ թէ Միացեալ Նահանգաց դրօշը պէտք է որ մնայ Փիլիպպեան կղզեաց մէջ՝ ոչ թէ ի նշան նուաճման, այլ իբրեւ նշանակ մարդասիրութեան և ազատութեան: — ՏԱՆԻՄԱՐՔԱՅԻ թագաւորն ընդունեցաւ Տէ Պարտէնֆլէթի՝ կրօնից պաշտօնէին, Թոմսըն զօրավարին՝ պատերազմի պաշտօնէին, և ներքին գործոց պաշտօնէայ Ռունփի հրաժարականները, և անոնց տեղ անուանեց զՀօրբինկ՝ կրօնից, զՍուաք՝ պատերազմի, և զՊրամսըն՝ ներքին գործոց պաշտօնեայ: — ՍԵՐՊԻՈՅ մէջ Աղեքսանդր և Միլան գնացին ի Նիշ. — Միլանու դէմ ենթադրեալ յարձակման դատաստանը յետաձգուեցաւ. — Կ'երեւի թէ այլ և այլ պատրուակներով կը յապաղեն անոր քննութիւնը:

## ՆԱՄԱԿԱՆԻ

ՊՕԼԻՍ. ՀԱՆՐԱԳԻՏԱԿ. — Ձեր նամակները ստացանք. Շնորհակալութիւն լուսանկարներուն համար: Կաղապարի մասին առանձին նամակ կը ստանաք: Ի մօտոյ կը խաւրենք գրքերը:

ՓԱՐԻԶ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. — Ձեր նամակի նիւթն աւելի մեր տպարանին կը վերաբերի և ոչ խմբագրութեանս, դիմեցէք տպարանի տեսչութեան: Իսկ յօդուածնիդ շատ լաւ գրուած է, բայց «Բազմավէպ»ի ուղղութենէն դուրս ըլլալով, կարելի չէ տպել:

ՄՕՍԿՈՒԱ. ՄԽԾ. ԽԱԼԱԹԵԱՆՑ. — Փութով կը գործադրուի խնդրածնիդ:

ՓԱՐԻԶ. ԲԱՆԱՍԷՐ. — Շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր տետրակներն, յօդուածն, և այլն:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. ԺՈՂՈՎ. ԳՐԱՏՈՒՆ. — «Բազմավէպ»ի թերթերն ստացած էք:

ԶՄԻՒՌՆԻԱ. Վ. Հ. ԱԹԱՆԱՍ Վ. — Երկրորդ անգամ կը խնդրուի փութով թերթերը մեզ դարձընելու:

ՊՕԼԻՍ. ԽԱՉԿՈՆՑ. ԷՖ. — Ձեր նամակներն ստացած ենք: «Հանք և իրենց ստուգաբանութիւնը» առ այժմ առանձին գիրք չըլլար, բայց միտք ունինք յետոյ դեռ աւելի ճոխացընելով տպելու: Նաեւ «Հայկական տաղաչափութիւնը» առանձին գիրք չըլլար: Ձեզ հետ ուրիշ շատերը գնահատեցին այդ երկու բանասիրական երկերն. շնորհակալութիւն Ձեր համակրանաց:

ՌՈՍՏՈՎ. «ԲԱԶՄԱՎԷՊԻ» ՍԻՐԱՀԱՐ. — Ցայտնելով մեր շնորհակալութիւնը պատուական նամակագրիդ, կը փութանք յայտարարել. նախ՝ թէ մենք աշխարհիկ լեզուի բացարձակ օրինաց գոյութեան կամ զօրութեան տեղեակ չենք տակաւին: Գիտենք սակայն, թէ «համար» նախնիք եւս ունէին «ի» նախդրիւ, և կու տային սեռական խնդիր. «ի համար թագաւորութեան, ի համար քեռ իւրոյ» (Խոր.): — Երկրորդ, «նորա» սեռական համարել և «անոր» տրական, ի կամաց կարծենք՝ և ոչ ի սովորութենէ: Նոր լեզուի մէջ «անոր» թէ սեռ. է թէ տրկ: Իսկ հնոյն մէջ թէ «նորա» և թէ «անոր» բացարձակ սեռական են. մին «նա» դերանուն, և միւսն «այն»: Վերջնոյս սեռականը փոխուեր է յայդ ձեւ՝ այսպէս. «այնոր-ինկ = անոր», և սա շատ հեռի է հին տրականէն (այնմիկ), թէ և այժմ իբր տրական եւս վարի: — Արդ, քանի որ «նորա» և «անոր» հաւասարապէս սեռական են, և «համար» սեռական խնդիր կ'առնու ըստ նախնեաց, շատ լաւ կարելի կը կարծենք ըսել՝ եւս «նորա համար», և ոչ լոկ «անոր համար»;

digitised by A.R.A.R.@